ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղերի համար.

- «Ոսկերչություն» մասնագիտության վարպետ՝ 1 դրույք
- «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության վարպետ՝ 1 դրույք
- «Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության վարպետ՝ 1 դրույք
- «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության վարպետ՝ 1 դրույք

Թափուր տեղերի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներն են.

վարպետի դեպքում՝ առնվազն մասնագիտական կրթություն կամ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ զբաղմունքի բնագավառում գործունեության առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի մարտի 26-ից մինչև ապրիլի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերի:

Մրցույթը տեղի կունենա ապրիլի 13-ին՝

- ✓ ժամը 12:00-ին՝ «Ոսկերչություն» մասնագիտության վարպետ,
- ✓ ժամը 13:30-ին՝ «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության վարպետ,
- ✓ ժամը 15:00-ին՝ «Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության վարպետ,
- ✓ ժամը 16:30-ին՝ «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության վարպետ

Մրցույթը տեղի կունենա ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք. Գյումրի, «Անի» թաղամաս, 11 փողոց, 5/2 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել /0312/ 6-64-07 հեռախոսահամարով:

Ուսումնարանի մասին՝ gyumriusumnaran4.am